տը, որուն յիշատակարանը Թորոս եպս. ընդօրինակած է իր ձեռագրին մէջ. «Ցարմարեցաւ ճառ Ծննդեան և յայտնութիւն Քրիստոսի Աստուծոյ մերոյ և գովեստ Տիրամայրն Աստուածածնին, ի բազմամեղ Առաքել պիտակ անուն վարդապետէ ի նոր-աշէն անապատիս, որ յանուն Ս. Աստուածածնին և Յովհաննու Կարապետին, ի թվ. Հայոց ՊՁ (=1431)։ Աղաչեմ զընթերցողսդ յիշման արժան առնել զմեղօք զառածեալս Առաքել»։

ԹՈՐՈՍ ԵՊՍ. ԿԵՍԱՐԻՈՑ. — 1417 ին ուխտաւորութեամբ այցելած է Ս. Յակոբի վանքը և իր ձեռքով գրած է հետևեալ յիշատակարանը Ս. Յարութեան տաճարին մեծ դրան մարմարեայ սիւնին վրայ «Թորոս եպիսկոպոս Յեւկասու? և Կեսարիոյ Յարութիւն, ի քեզ յանձին. թվ. ՊԿՁ» (=1417). (Հ. Վանորայք, էջ 33)։

ԹՈՐՈՍ ԵՊՍ. ՊԱՐՈՆՏԷՐ, ՊՈԼՍԵՑԻ. — Մբ. վախճանած է 1739 ին և թաղուած Ս. Փրկչի վանքը. այս է իր տապանագիրը. «Այս է տապան հանգստեան ըստամպոլցի Թորոս Պարոնտէրի որ հանգեաւ ի ՌՃՁԸ (=1739) թվին ընթերցողքդ տուք զողորմին»։ Ս. Յակոբի նուիրած իր յիշատակի մասին տեսնել (ՄՁ. թ. 532)։

ԹՈՐՈՍ ԵՊՍ. — Մբ. Սսոյ, 1830 ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը, յետոյ կը մեկնի Կիպրոս, իբր Նե. Սսոյ կաթողիկոսութեան (Արձագր. 1828 էջ 38)։

ԹՈՐՈՍ ՍՐԿ. ՎԺԱՆՑԻ (Շիրակի մէջ գիւղ մը). — Մբ. ՌՄԿԲ (=1813) թուին Երուսաղէմի Ս. Փրկչի վանքին մէջ կ'ընդօրինակէ Վարդան վրդ. ի Մեկն. Երգոց Երգոյն գիրքը. եւ Գրիգոր Մագիստրոսի Թուղթերը. (ՄՁ. թ. 137 և 1523)։

ԹՈՐՈՍ ՎՐԴ. ԱՆԱՊԱՏՑԻ. — Մբ. 1820 ին կը ձեռնադրուի։

ԹՈՐՈՍ ՎՐԴ. — Մբ. 1316 ին յիշատակարան մը կ'անուանէ այս Թորոս վրդ. ը հոգեղից եւ արդիւնական վարդապետ. « . . . աղաչեմ յիշել ի տէր զհոգելից եւ զարդիւնական վարդապետն Թորոս որ զաւրինակն շնորհեաց որոյ ձեռնտուութեամբ և յերիւրմամբ գիրքս գրեցաւ. նաև զմաքուր հոգի դպիրն Կարապետ և զծնողս նորա. բազումս աշխատեցաւ ի կոկել նիւթոյս և յայլ